քաղաքականությունը ֆաշիստական Գերմանիայի նկատմամբ, որը և նպաստեց Թերակղզու փաստական օկուպացմանը։ Պատմական հարուստ փաստերով լուսաբանված էր բալկանյան ժողովուրդների համատեղ մահու և կենաց պայքարը ընդդեմ գերմանական ֆաշիզմի և նրա տեղական կամակատարների։

Միջազգային հարաբերությունների, ինչպես նաև բալկանյան երկրներում բանվորական, սոցիալ-դեմոկրատական ու կոմունիստական շարժման շուրջը ծավալվեց սուր բանավեճ։ Ա. Նարոչնիցկին, Վ. Խվոստովը, Ա. Զուբարյանը (ՍՍՀՄ), Ժ. Նաթանը (Բուլղարիա) և մի շարք այլ գիտնականներ վճռական հակահարված տվեցին ամերիկյան պատմաբաններ Ս. Ցիչերի, Կ. Կարպատի և այլոց՝ Բալկաններում Սովետական Միության արտաքին քաղաքականության և բանվորական ու կոմունիստական շարժման պատմության հարցերը խեղաթյուրելու փորձերին։

Վերջում սեկցիոն ու ենթասեկցիոն աշխատանքից հետո կոնգրեսի մասնակիցները անցկացրին եզրափակիչ պլենար նիստ, որտեղ հանրագումարի բերվեցին կոնգրեսի արդյունքները և ուրվագծվեցին հետագա անելիքները։ Բարձր գնահատական տալով կոնգրեսի գիտական և քաղաքական նշանակությանը, ելույթ ունեցողները առաջարկեցին հրատարակել կոնգրեսի բոլոր նյութերը և ձեռնամուխ լինել նախապատրաստական աշխատանքներին՝ երեք տարի հետո բալկանագետների համաշխարհային երրորդ կոնգրեսն անցկացնելու համար։ Այդ առաջարկն ընդունվեց։

Հայ ժողովուրդը դարեր շարունակ բազմաթիվ թելերով կապված է եղել բախտակից բալկանյան ժողովուրդների հետ, իսկ հայագիտությունը՝ բալկանագիտության հետ։ Մեր միջնադարյան մատենագիրները և ժամանակագրողները հաղորդում են բազմաթիվ մեծարժեք տեղեկություններ Բալկանների և բալկանյան ժողովուրդների մասին։ Ուստի ունենք աղբյուրագիտական ծանրակշիռ հիմքեր՝ հուսալու համար, որ մեր հետազոտողները, միջնադարյան աղբյուրագետները, բյուզանդագետները, թուրքագետները և պատմաաշխարհագրագետները կձեռնարկեն համապատասխան աշխատանքներ և գործուն մասնակցություն կցուցաբերեն բալկանագետների համաշխարհային երրորդ կոնգրեսին, որը տեղի է ունենալու Աթենքում 1969 թ.։ Դա կնպաստի ոչ միայն բալկանագիտության զարգացմանը, այլ նաև հայագիտության շրջանակների հետագա ընդլայնմանը։

Ս. ՀՈՎՆԱՆՅԱՆ

ԲՅՈՒԶԱՆԴԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ XIII ԿՈՆԳՐԵՍԸ ՕՔՍՖՈՐԴՈՒՄ

Բյուզանդագիտական կոնգրեսները հրավիրվում են յուրաքանչյուր հնգամյակ և մեծ դեր են կատարում հատկապես գիտական կապերի հաստատման ու ընդլայնման ուղղությամբ։ Վերջին կոնգրեսներին, որոնք տեղի ունեցան Ստամբուլում, Մյունխենում, Օխրիդում (Հարավսլավիա), մասնակցեցին նաև սովետական գիտնականները։ Սակայն, եթե անցյալ կոնգրեսներում սովետական գիտությունը ներկայացնում էին 2—3 մասնագետ, ապա Օքսֆորդում ներկա էին 15 գիտնական Մոսկվայից, Լենինգրադից, Երևանից և Թբիլիսիից՝ ՍՍՀՄ ԳԱ թղթակից-անդամ Վ. Ն. Լազարևի ղեկավարությամբ։ Օքսֆորդի կոնգրեսին մասնակցեցին մոտ 700 հոգի՝ 23 երկրից։ Ներկա էին աշխարհի խոշորագույն բյուզանդագետները։

Կոնգրեսի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ սեպտեմբերի 5-ին։ Մի շարք գիտնականներ զեկուցեցին բյուզանդագիտական որոշ կենտրոնների ընթացիկ գործունեության և առանձին մասնաճյուղերի վիճակի մասին։

Հաջորդ օրը սկսվեցին պլենար նիստերը։ Գլխավոր և հարակից զեկուցումները նախապես հրապարակված էին, ուստի զեկուցողները սահմանափակվեցին կարճ ելույթներով։

Կոնգրեսի ընթացքի մասին պատկերացում տալու համար թվարկենք գլխավոր զեկուցումները. Գ. Մորավչիկ. Բյուզանդիայի դերը Սև ծովի հյուսիսային ափերի թուրքական ժողովուրդների շրջօղակում. Գ. Օստրոգորսկի. Բյուզանդա-սերբական հարաբերությունների արմատները XIV դ.. Գ. Գ. Լիտավրին. Ա. Պ. Կաժդան. Զ. Վ. Ուդալցովա. Հին Ռուսիայի և Բյուզանդիայի հարաբերությունները XI—XIII դդ. առաջին կեսում. Մ. Վելիմիրովիչ. Բյուզանդական երգարվեստի ազդեցությունը սլավոնական երկրների երաժշտության վրա. Դ. Անգելով. Բուլղարական երկրները և բուլղար ժողովուրդը բյուզանդական պետության սահմաններում՝ XI—XII դդ. (1018—1185)։ Է. Կոնդուրակի. Ի. Բարկեոս. Պ. Դիակոնու. Նոր ուսումնասիրություններ Ստորին Դանուբի բյուզանդական limes-ների վերաբերյալ X—XI դդ.. Կ. Վայցման. Բյուզանդական մանրանկարչությունը և պատկերագրությունը XI դ.. Օ. Ստրունկ. Բյուզանդական երաժշտությունը վերջին ուսումնասիրություն-

ների և հրապարակումների լույսի տակ. է. Կրրիարաս. Երկլեզվություններ (diglossie) Բյուզանդիայի գոյության վերջին դարերում. նոր հունական գրականության ծնունդը. Պ. Տրիտսոն, Բյուզանդական դրամները որպես աղբյուրագիտական նյութ. Ֆ. Ալկեն, Բյուզանդական վարքագրության ծառայություններ պատմությանը. Ն. Սվորոնոս. Բյուզանդական կայսրության հասարակությունը և ներքին կազմակերպությունը XI գ. գլխավոր հարցեր. Ս. Թումանով, Մանազկերտի ճակատամարտի հետևանքները. Պ. Խաչանիս. Դիտողություններ բյուզանդական կայսրության դեմոգրաֆիայի վերաբերյալ։

Այսպիսով, գլխավոր զեկուցումները նվիրված էին Բյուզանդիայի XI դ. պատմությանը և արվեստին, սակայն հարակից զեկուցումները և հատկապես հաղորդումները զգալիորեն լայնացրին այդ սահմանները։ Հայտարարված էր 246 հաղորդում, որոնց մի փոքր մասը, զեկուցողների բացակայության պատճառով, չընթերցվեց։ Հնարավոր չէ այստեղ ամփոփել այդ հաղորդումների բովանդակությունը, ուստի անդրադառնում ենք այն նյութերին միայն, որոնք վերաբերում են կովկասագիտությանը, հատկապես Հայաստանին։

Նախ՝ Ս. Թումանովի վերը հիշատակված զեկուցման մասին։

Ս. Թումանովը վարում է Ջորջթաուն համալսարանի (Վաշինգտոն) կովկասագիտության ամբիոնը, մեծ վաստակ ունի Կովկասի, հատկապես Հայաստանի և Վրաստանի հին ու միջնադարյան պատմության ուսումնասիրության ասպարեզում։ Հեղինակի բացակայության պատճառով նրա զեկուցումը ընթերցեց հայ գիտական հասարակայնությանը քաջ ծանոթ Ջարլզ Դաուսեթը (այժմ՝ Օքսֆորդի Պեմբրոկ կոլեջի հայագիտության ամբիոնի պրոֆեսոր)։ Ս. Թումանովը պնդում է, որ Մանազկերտի ճակատամարտը բյուզանդա-կովկասյան ավելի քան 500-ամյա հարաբերությունների զարգացման վերջին փուլն էր։ Այդ կապակցությամբ նա քննության է առնում այդ հարաբերությունների մի շարք կարևոր կետեր, անդրադառնալով անգամ մ. թ. I դարի դեպքերին։ Ս. Թումանովը ելնում է այն տեսակետից, որ Հայաստանը և Վրաստանը կազմում էին պատմական և մշակութային մի ամբողջություն, որը չկարողացան ճեղքել ոչ դավանաբանական, ոչ էլ ազգային վեճերը։ Զեկուցողն առաջարկում է բյուզանդա-կովկասյան հարաբերություններին մոտենալ երկու տեսանկյունից, այն է՝ ուսումնասիրել Կովկասի և Բյուզանդիայի հարաբերությունները, և մյուս կողմից՝ Բյուզանդիայի վերաբերմունքը կովկասյան ծագում ունեցող այն անձանց և հայ ավագանու ընտանիքների հանդեպ, որոնք հաստատվել էին կայսրության սահմաններում։ Ս. Թումանովը պնդում է, որ մինչև XI դարը հայերի և Հայաստանի դերը ավելի մեծ էր, քան Վրաստանինը, և որ այդ դրությունը փոխվում է միայն XI դարից հետո։ Ժամանակի ընթացքում Կովկասը կորցնում է իր՝ բուֆերային պետության իմաստը, և Բյուզանդիան, Թումանովի կարծիքով, հովանավորական քաղաքականությունից անցնում է գավթողականի։ Մանազկերտի պարտությունը, եզրակացնում է հեղինակը, Բյուզանդիայի կողմից Հայաստանի գրավման անխուսափելի արդյունքն է։

«Հայաստանը X և XI դարերում» հարակից զեկուցումով հանդես եկավ Հայկական ՍՍՀ ԳԱ արտասահմանյան անդամ, միջնադարյան արվեստի և պատմության հայտնի մասնագետ Սիրարփի Տեր-Ներսեսյանը (Փարիզ)։ Նա շեշտեց Ս. Թումանովի լայն հարցադրումը և անդրադարձավ X—XI դդ. տնտեսությանն ու մշակույթին։ Հիշյալ դարաշրջանի տնտեսական բարգավաճումը Ս. Տեր-Ներսեսյանը կապում է նախ և առաջ այն հանգամանքի հետ, որ Հայաստանի վրայով անցնում էին տարանցիկ առևտրի հիմնական ճանապարհները։ Միաժամանակ նա շեշտում է տեղական արհեստների զարգացումը։ Հայկական մշակույթի ասպարեզում Ս. Տեր-Ներսեսյանը նկատում է աշխարհիկ տարրի զարգացման ուժեղացում, մի երևույթ, որ պարզորոշ կերպով արտահայտվեց Գրիգոր Մագիստրոսի գործունեության մեջ։ Զեկուցողը ուշադրություն է հրավիրում նաև դասակարգային պայքարի սրվելու վրա, նկատի ունենալով նախ և առաջ գյուղացիական շարժումները Սյունիքում և Թոնդրակյան շարժումը։ Ֆեոդալական մասնատվածությունը, արաբական և այլ էմիրությունները հայկական հողերի վրա, դասակարգային պայքարը՝ այդ բոլորը, Ս. Տեր-Ներսեսյանի կարծիքով, դյուրացրեցին բյուզանդական գավթումները։ Ե՛վ Բյուզանդիայի, և Հայաստանի համար դա մի մեծ դժբախտություն էր, որովհետև իր գավթողական քաղաքականությունը Բյուզանդիան սկսեց՝ գտնվելով ռազմական հզորության գագաթնակետին, իսկ ծավալեց, երբ ինքն արդեն բոլորովին կորցրել էր երբեմնի ուժը։ Բյուզանդական կայսրերը ենթադրում էին, որ վտարելով տեղացի իշխաններին և զորացրելով տեղական ջոկատները, իրենք ավելի հաջող կերպով կպաշտպանեն գրավված երկիրը։ Այդ սխալ քաղաքականությունը կործանեց Հայաստանը և ճանապարհ բաց արեց սելջուկյան արշավանքների համար, որը աղետալի եղավ հենց իրեն՝ Բյուզանդիայի համար։

Ի. Թոմսսնի (Քեմբրիջ, ԱՄՆ) «Շրջապատի ազդեցությունը օտարության մեջ գտնվող հայերի վրա XI դարում» հարակից զեկուցումը

Ավիրված էր գերազանցապես հայերի գրական գործունեությանը։ Ընդգծելով հայ մշակույթի վերելքը XI դ., Ռ. Թոմսոնը ենթադրում է, որ հունա-բյուզանդական շրջապատը նպաստում էր հայերի մտահորիզոնի լայնացմանը, ավանդական տեսակետները (հատկապես դավանաբանական ասպարեզում) որոշ չափով վերանայվում էին։ Հունական ազդեցությունը ամենից մեծ չափով նկատվում է Գրիգոր Մագիստրոսի գործունեության մեջ։

Հարակից վերջին զեկուցումը «Թուրքերը արևելյան Փոքր Ասիայում XI դ.» (Ֆ. Ստոմեր, Անկարա) սելջուկ թուրքերի Փոքր Ասիա ներթափանցման և դեպի արևելք նրանց հետագա շարժման համառոտ տեսություն էր։ Հեղինակի կարծիքով, հողուց զեղերի հերթական ալիքները առաջացրին արոտավայրերի պակասություն, և սելջուկ առաջնորդները ուղղեցին այդ հոսանքը դեպի բյուզանդական սահմանները։

Թվարկված զեկուցումների շուրջը ծավալվեց մտքերի լայն փոխանակություն։ Ս. Վրիոնիսը (ԱՄՆ) շեշտելով գլխավոր զեկուցման արժանիքները, ասաց, որ հարցադրումը չափազանց լայն է. Մանազկերտի պարտության հիմնական պատճառը այն է, որ XI դ. Բյուզանդիայում կատաղի պայքար էր ծավալվել բյուրոկրատիայի և զավառային ազնվականության միջև. հայ-բյուզանդական թշնամությունը ևս խաղաց իր բացասական դերը, բայց դա գործոններից մեկն էր։ Ս. Թումանովը, Ս. Վրիոնիսի կարծիքով, չպետք է անտեսի եկեղեցական հարաբերությունները Բյուզանդիայի և հայերի ու սիրիացիների միջև, հատկապես Կոստանդինոս X Դուկասի օրոք։ Ն. Լոմոուրին (ՍՍՀՄ) հիշեցրեց, որ թուրք ցեղերը իրենց մշակութային զարգացմամբ ավելի ցածր մակարդակի վրա էին, քան Փոքր Ասիայի տեղացի բնակիչները։ Կ. Յուզբաշյանը (ՍՍՀՄ) բարձր գնահատեց Ս. Թումանովի զեկուցումը, որը մեծ չափով խարբսխվում է հեղինակի անձնական հետազոտություններ ի վրա, սակայն դիտեց այն որպես բյուզանդա-կովկասյան հարաբերությունների մի ուրվագիծ և ոչ Մանազկերտի պարտության բացատրություն։ Անդրադառնալով Ս. Տեր-Ներսեսյանի զեկուցմանը, նա ասաց, որ համամիտ է Ս. Տեր-Ներսեսյանի հետ՝ դասակարգային պայքարի նշանակության հարցում, սակայն ոչ պակաս դեր է խաղացել այդ շրջանում նաև քաղաքական պայքարը բյուզանդական կողմնորոշման հակառակորդների և կողմնակիցների միջև։

Անկյուն զեկուցումներից մի քանիսը դերազանցապես կամ կիսով չափ հայագիտական բնույթ էին կրում։ Մեծ հետաքրքրությամբ լսվեց Կոլումբիա համալսարանի դասախոս, հայագետ և բյուզանդագետ Նինա Գարոյանի ելույթը՝ «Քաղաքականություն թե ուղղափառություն. Հայաստանը IV դարում» թեմայով, որը հեղինակի մեծ աշխատության ամփոփումն է։ Ն. Գարսոյանը ցույց է տալիս, որ Տիրանը, Արշակ II-ը և Պապը իրենց քաղաքականության մեջ հետևում էին Բյուզանդիային, մի պետության, որի հետ Հայաստանը սերտորեն կապված էր նաև ռազմական առումով։ Եկեղեցական քաղաքականության մեջ ժամանակի կայսրերը հետևում էին արիոսական դավանանքին, և հայ արքաները համակերպվում էին այդ ուղղությանը։ Այդ է պատճառը, որ հայ թագավորների և կաթողիկոսների (Հուսիկ, Դանիել, Ներսես) միջև սկսվում է կատաղի պայքար. դրանով է բացատրվում նաև Փավստոս Բյուզանդի վերաբերմունքը այդ թագավորների նկատմամբ։ Ամմիանոս Մարկելինոսի երկը, ինչպես նաև Բարսեղ Կեսարացու և Թեոդորիտ Կյուրացու նամակները ցույց են տալիս, որ Հայաստանում դոյություն է ունեցել նաև Աթանաս Ալեքսանդրացուն հետևող մի կուսակցություն, որը որոշ դեր էր խաղում հայ թագավորների և բյուզանդական կայսրերի հարաբերությունների մեջ։ Զեկուցողը գտնում է, որ դավանաբանական վեճերը մեծ դեր էին խաղում քաղաքական կյանքում։

«Հայ-բյուզանդական հարաբերությունները XI դ.» թեմայով զեկուցում կարդաց Արշակ Սարգիսյանը (ԱՄՆ, Կոնգրեսի գրադարան)։ Ի մի բերելով վերջին ուսումնասիրությունների արդյունքները, նա ցույց տվեց, թե ինչպիսի բացասական դեր կատարեց բյուզանդական քաղաքագետների և հատկապես եկեղեցու թերահավատությունը հայերի նկատմամբ. բյուզանդական եկեղեցու մշտական ձգտումը գավանափոխ անել հայերին։ Այդ հանգամանքները, զեկուցողի կարծիքով, ճանապարհ բաց արին սելջուկ նվաճողների առաջ։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Սուրեն Երեմյանի զեկուցման թեման էր՝ «Հայաստանի հյուսիս-արևմտյան մարզերի գրավումը Բյուզանդիայի կողմից XI դ.»։ Հեղինակը տվեց Հայաստանի պատմական զարգացման ընդհանուր պատկերը IX—XI դդ. և մանրամասնորեն կանգ առավ Վարսի (Վանանդի) թագավորության նվաճման (1065 թ.) հետ կապված հարցերի վրա։ Կարեն Յուզբաշյանը (ՍՍՀՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունք) «Բյուզանդիան Արիստակես Լաստիվերտցու Պատմության մեջ» զեկուցման մեջ առաջ քաշեց այն ենթադրությունը, թե բյուզանդական գրականության ամենահետաքրքիր երկերից մեկի «Ստրատեգիկոնի» (1075—1078) հեղինակը ոչ

այլ ոք է, եթե ոչ Անիի կառավարիչ Բագրատ Վխկացին։

Լավեցին նաև մի շարք այլ հաղորդումներ, որոնք այս կամ այն չափով նվիրված էին հայ ժողովրդի պատմությանը կամ արվեստին։ Կոնգրեսը պարզորոշ կերպով ցույց տվեց, որ բյուզանդագիտության ասպարեզում հայագիտությունը լիովին պահպանել է իր նշանակալից տեղը։

Կ. ՅՈՒԶԲԱՇՅԱՆ (Լենինգրադ)